

## ԳԼՈՒԽ ՎԵՐՋԻՆ

Այդպես է անտառաց մէջ տերեւներու սերունդը, եւ այդպես նաեւ մահկանացուացը: Տերեւներէն ոմանք՝ քամին գետին կը թափէ, եւ ոմանք կանաչ անտառը կը բողբոջէ՝ երբ գարնան եղանակը հասնի,— այդպես մարդկանց սերունդք երբեմն կը ծաղկին, երբեմն կը վերջանան:

## ՅՈՄԵՐՈՍ

Թեոդորոսի հետ իջած պատանդներն ի Դամասկոս հազար եօթ հարիւր եօթանասունհինգ հոգի, բոլորն էլ ազնուական, բոլորն նախարարական, երբ Մուշեղ եւ Յամագասպ ապստամբեցան չի կրնալով դիմանալ մահմեդական բռնութեան, մէկ օրուան մէջ ջարդվեցան հասորիս: Եւ ինքն Մուշեղ Թեոդորոսի պէս վերջացուց իր կեանքը օտարութեան մէջ, գերութեան դառն հացն ուտելով, հարաւի խորշակէն հալած, աչքերը հիւսիս դարձուցած՝ փրկութեան սպասելով, որ չէր հասներ:

Նախախնամութեան խրատներն էին սոքա, բայց դժբախտաբար անօգուտ անցան: Մարդ եթէ չի խրատուիր իւր հարց, իւր նախնեաց օրինակէն, չուսնիր Նոցայ պատմութիւնը, կ'ինկնի Նոյն սխալանաց մէջ, կը մատնուի Նոյն տառապանաց, Նոյն տանջանաց: Մարդուս յատկութիւնը եւ հանասնոց տարբերութիւնը՝ ասուն լինիլը չէ, այլ անցեալէն խրատուելովդ օրաւոր կատարելագործուիլն է, որուն յառաջադիմութիւն ըսեր են:

Հայոց իշխեցողք նախարար, կաթողիկոս եւ իշխան շատ անգամ կը տեսնենք պատմութեան մէջ, ման աւանդ այն ժամանակին պատմութեան եւ Նորա շարունակութեան մէջ, ամուր եւ անառիկ դիրքերու վրայ վանքեր, դղեակներ, բերդեր եւ ոստաններ կը շինէին իրենց առանձին եւ անձնական պահպանութեան համար, ընդհանուրին մտածող շատ քիչ կը գտնուեր, եթէ գտնուեր՝ այդ ընդհանուրը ծառայեցնելու նպատակ միայն ուներ:

Ընդհանուրի համար եթէ մտածէին, իրենց շէնքերը թերեւս զիրենք պահպանէին, բայց իրենք հասկնալ չուզելով այդ, փառաւոր շէնքերը վանք, եկեղեցի եւ պատառ աւերակ, յափշտակութիւնդ ախոռ սրբապիղծներու եւ անօրինաց կը տեսնենք: